է, որ հեռավոր վայրերում շատ հայ վաճառականներ ստիպված են եղել առևրես հավատափոխ լինել և վերադառնալով իրենց բնակավայրը վերստին մկրտվել, որն իր հերթին տեղի է տվել նոր հետապնդումների տեղի մուսուլման բարձրաստիճան հոգևորականության կողմից[1]։

Ինչպես դժվար չէ նկատել մեջբերված մի քանի փաստերից, կրոնական անհանդուրժողականության և բռնի ասիմիլյացիայի քաղաքականությունը անմիջականորեն անդրադառնում էր հայ ռայաթների տնտեսական կյանքին և շոշափում նրանց համար կենսական նշանակություն ունեցող տնտեսական խնդիրներ։

Վերը մենք առիթ ունեցանք շեշտելու, որ իրանական կառավարող շրջանների կողմից կիրառվող ասիմիլյացիայի քաղաքականությունը հայտնի պատճառներով հայ ժողովրդի աշխատավորական խավերի մեջ իր համար նպաստավոր հող չէր գտնում, և ընդհակառակը, հավատափոխության դեպքերը հաճախակի էին հատկապես հայ շահագործող՝ ունևոր դասի շարքերում (կալվածատերեր, վաճառականներ, առևտրականներ և քաղաքաբնակ արիստոկրատիայի այլ ներկայացուցիչներ)։ 14—15-րդ դդ. պատմությունից ևս հայտնի է, որ այդ դարերում մասամբ բռնի և մասամբ է կամավոր կերպով մահմեդականություն ընդունեցին հայ խոշոր ֆեոդալական տների մի շարք աչքի ընկնող ներկայացուցիչներ։

Այս հանգամանքը առավել ևս գալիս էր մտահոգելու հայոց եկեղեցու գործիչներին, որովհետև այդպիսով խարխլվում էին եկեղեցու ինչպես հասարակական, այնպես նաև տնտեսական հիմքերը։ Եվ ահա մենք տեսնում ենք, որ այս տարիների կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին հանդես է գալիս ասիմիլյացիայի քաղաքականության դեմ ուղղված պայքարի գլխավոր կազմակերպչի դերում։ Նա առաջին հերթին փորձում է զանազան սկզբունքային հարցերի կապակցությամբ գերագույն Դիվան-ալ-սադարաթից ձեռք բերել հատատուն ֆեթվաներ և դրանք վավերացնել տալ շահական ֆերմաններով։ Այդ ֆեթվաները շարիաթական-նոտարական պատճեններով բազմացվում էին և ուղարկվում բոլոր թեմերին։ Ապա նա շրջագայում էր խոշոր հայաբնակ կենտրոնները և ամենուրեք կազմակերպում վանքերի ու եկեղեցիների վերականգնման և վերանորոգման գործը։ Նրա ստացած ֆեթվաների մեծ մասը հատկապես վերաբերում է Հայաստանի տարբեր վայրերում (Էջմիածին, Մուղնի, Խոր-Վիրապ, Մեղրի, Ագուլիս, Աստապատ և այլուր) գտնվող վանքերի վերանորոգման իրավունքներին, որովհետև ամեն անգամ երբ հայերը ձեռնարկում էին վանքերի ու եկեղեցիների վերանորոգման, տեղական շարիաթական օրգանների կողմից արգելքներ էին հարուցվում և հարկ էր լինում այդ մասին առանձին ֆեթվայով թույլտվություն ստանալ Սպահանից[2]։ Ինչպես գիտենք, Հակոբ Ջուղայեցին իրեն հատուկ եռանդով առանձին ուշադրություն էր նվիրում նաև հայերեն գրքերի տպագրության կազմակերպման հարցին։

Հայոց եկեղեցու և հայ համայնքի իրավունքների այս փաստագրումը անզոր էր կանխելու ազգային հալածանքների և կրոնական ռեպրեսիաների ալիքը, որը գնալով ավելի էր մոլեգնում։ Երևանի բեգլարբեգ ընչաքաղց

---

[1] ՄՊՎ, թղթ. 1բ, վավ. №№ 132ա, 132բ, 132գ, 146։

[2] ՄՊՎ, թղթ. 1ա, վավ. № 67, թղթ. 1բ, վավ. №№ 134, 136, 146 և այլն։